Ավետիք Իսահակյանը Խաչատուր Աբովյանի մասին

Խաչատուր Աբովյանը ամեն ինչ էր մեզ համար։ Նա ուսուցիչ էր ու դաստիարակ, նա հայրենասիրության մեր ներշնչարանն էր։ Նա հայության ապագայի խանդավառ պատգամախոսն էր։

Ինչ որ նրանից հետո եղել է մեծ բան մեր կյանքում, եղել է նրա զարկով, նրա շնչով՝ ազատագրական պայքար, ազգային ինքնագիտակցության զարթոնք, նոր, կենսաբողբոջ լեզու և մեր նոր լիրիկան։ Նա՝ Աբովյանը, մեր նոր պատմության ամենամեծ նահատակն է՝ անթառամ լուսապսակով զարդարված։ Նա մեր նոր առասպելն է, ազգային նոր միֆը... բազմախորհուրդ

«Վերք Հայաստանին» սովորական առումով գիրք չէ, իհարկե. նա վերք է իրոք՝ հայ մեծադժբախտ ժողովրդի դարավոր վերքը... Նա գիրք չէ. նա սիրտ է՝ տարերային զգացմունքներով զեղուն. ահագին սիրտ՝ ըմբոստ, զայրալից և վշտագին, վառվող, մխացող սիրտ...

Աբովյանը խտացումն եղավ հայ ժողովրդի երազանքների, ձգտումների, ցավերի ու տառապանքի, նրա հոգու և իմաստության. նա եղավ հայ ժողովրդի լեզուն, սրտագին լեզուն։

«Վերք Հայաստանին» դա գիրք չէ, միմյանց հետևից շարված տառեր, թուղթ ու մելան, չափված, ձևած, դա պոռթկած սրտի խորքից շղթայազերծված մրրկարշավ է, հրաբուխ։

. . . Աբովյանի մեծ սիրտը . . . հեղեղեց և մեծ կրակ ու բոց որոտաց, և շարժեց հայ ժողովրդի ներաշխարհը բովանդակ, և կայծակի նման ճեղքեց ապագայի մութն ու մռայլը, ցույց տվեց փրկության ուղին, հայ ժողովրդիազատագրման-անկախության ուղին, լուսավորություն, անձնազոհ հայրենասիրություն, սխրալի, հերոսական քաջագործություն։

Մեկը պիտի ծագեր հայ ժողովրդի հոգուց՝ մի առաքյալ, մի մարգարե, մի մեծ բանաստեղծ, որ ժողովրդին բերեր վերածնունդի իմաստուն պատգամներ, հրեղեն խոսքով խանդավառեր նրա սիրտը, ամրացներ նրա կամքը անձնազոհ հայրենասիրությամբ, լուսավորեր նրա բախտորոշ ճանապարհները դեպի ինքնագիտակցություն, ըմբոստացում, ազատություն։

Աբովյանը ազգային այդ վեհ միսիայի ընտրելագույն պատգամախոսն էր՝ ծնված իսկ Հայաստանի պատմական կենտրոնից՝ Արարատյան դաշտից, ժողովրդի դարավոր ընդերքից։

Աբովյանը խտացումը եղավ հայ ժողովրդի երազանքների, ձգտումների, ցավերի ու տառապանքի, նրա հոգու և իմաստության, նա եղավ հայ ժողովրդի լեզուն, սրտագին լեզուն։

Այնտեղ Հայաստան աշխարհն էր իր տարերային-տիտանային պեյզաժներով, որոն դարձել են բնապաշտական, կոսմիկական երաժշըություն, օրատորիաներ։

Չորս գիրք ունի հայ ժողովուրդը, որ ինչպես չորս բարձր սյուներ, կրել են հայ ժողովրդի ոգին, նրա պայքարի իմաստը, նրա լավագույն ապագայի տենչանքները, նրա իդեալները։ Մովսես Խորենացու Հայոց պատմությունը, Եղիշեի՝ Վարդանանց պատերազմը, Նարեկացու խոսքը անմահության և հավերժության հետ և Աբովյանի <<Վերքը>>։ Այս նվիրական գրքի մեջ հրեղեն լեզվով արտահայտված է մեր ժողովրդի խորագին վիշտը, նրա պայքարը և անշիջանելի պայքարը։